



ԱՆՈՏԱՑԻԱ

Ռ.Ա.Գրիգորյան,
Վիրաբուժության ամբիոնի վարիչ,
«Մուրբ Թերեզա» բժշկական համալսարան

***Մասնագիտական կրթության որակը և արդյունավետությունը պահանջում է
պատշաճ դաստիարակություն և անմար աշխատասիրություն***

Մասնագիտական դաստիարակության նպատակն է առաջին հերթին ապագա բժիշկների մոտ հաստատել այնպիսի հասկանիչներ, որոնք անհրաժեշտ են մասնագիտական արդյունավետ գործունեության համար: Ապագա բժշկի կերպարի ձևավորումը տարերային պրոցես չէ: Այն նույնքան բարդ ու անընդհատ է, որքան ինքը՝ կյանքը, որի բարդությունը և հակասականությունն արտացոլվում են մարդու բարոյական գործողությունում: Բազմակողմանիորեն զարգացած և հոգեպես հարուստ անհատի կազմավորումը ներկայիս խնդիր է, մեր օրերի իրողություն: Դա պատահական չէ, որովհետև բժշկի մասնագիտական բարձր կուլտուրան կարևորագույն բուժական գործոն է, որն ինքնին չի մշակվում, այլ դաստիարակվում է բժշկի գործունեության, բարոյական պրոբլեմները ճիշտ ըմբռնելու հիմքի վրա: Դա նշանակում է, որ բժիշկների պատրաստման գործում բազմակողմանի գիտելիքներ տալու հետ մեկտեղ կարևոր խնդիր է հանդիսանում ստեղծագործաբար մտածող մարդու դաստիարակումը: Ապագա բժշկի ձևավորումը պիտի սկսվի առաջին կուրսից, երբ տեղի է ունենում հոգեբանական շրջադարձ միջնակարգ դպրոցի ուսուցումից դեպի ինքնուրույն բժիշկ-անհատի և քաղաքացու ձևավորումը, որին զուգընթաց ձեռք բերած գիտելիքներն ու մշակվող վարքագծի բարոյական նորմերը նպատակալաց կերպով պետք է ենթարկել մարդկանց առողջության պահպանման շահերին: Այդ տեսակետից բժշկական բուհի հիմնական խնդիր պիտի դառնա ինքնուրույնության և պատասխանատվության դաստիարակումը, քանի որ պատասխանատվությունն ու ինքնուրույնությունն են, որ առաջին հերթին անհրաժեշտ են լինում երիտասարդ բժիշկ-մասնագետին: